


Ալեքսանդր Գրիգորյան. Նշածն աչքերի տիրակալը




Չնայած անհաշիվ-անհամար գեղանկարչական ստեղծագործությունների առկայությանը և արդի հայ կերպարվեստի երևելի դեմքերից մեկը լինելու հանգամանքին՝ ՀՀ վաստակավոր նկարիչ Ալեքսանդր Գրիգորյանն իրեն ավելի շատ բանաստեղծ էր համարում:

Խորամուխ լինելով արվեստագետի էության և գեղարվեստական մտածողության մեջ՝ մի ավելորդ անգամ ևս համոզվում ես, որ յուրաքանչյուր մարդ ինքն իրեն ավելի լավ է ճանաչում: Նրա հրատարակած բանաստեղծական միակ ժողովածուն (1998), անտարակույս, վկայում է հեղինակի բնական օժտվածության և պատկեր կառուցելու անուրանալի վարպետության մասին.

Կփնտրեմ կգտնեմ քեզ մի օր,
Կբռնեմ մատներդ բարակ,
Կնայեմ աչքերիդ լուսավոր
Ու կարոտս կփռեմ քո առաջ:

Ալեքսանդր Գրիգորյանի գրական փորձը կարծես եկավ հաստատելու ֆրանսիացի նշանավոր նկարիչ Դելակրուայի այն միտքը, ըստ որի «օժտված նկարիչը պիտի որ նաև տաղանդավոր գրող լինի»: Մարտիրոս Սարյանը, ժամանակին ծանոթանալով իր երիտասարդ գործընկերոջ քերթվածներին, խոստովանել է. «Ես էլ էի ուզում գրող դառնալ: Բայց ինչպե՞ս դարձա նկարիչ, ինքս էլ չիմացա»:

Ալեքսանդր Գրիգորյանն իր խառնվածքով ու ներքին էությամբ, այո՛, նախ և առաջ բանաստեղծ է. պարզապես «բանաստեղծում», իր խոհերն ու ապրումներն արտահայտում է գույներով ու դրանց նրբին երանգներով: Այնքան վառ ու տպավորիչ է նրա գունաշխարհը, որ արտահայտած թեման երբեմն ետին պլան է մղվում, դառնում ածանցյալ և ստորադաս: Ու արվեստասերի հիշողության մեջ ավելի շատ մնում է վրձնահարվածների այն հրավառությունը, գույների այն



խրախճանքը, որ տեսնում է նրա կտավներում:

Նկատե՞լ եք, որ մեր պոեզիան, գրականությունն ընդհանրապես, ինչպես նաև ազգային երաժշտությունն իրենց խորքում որքա՞ն են տխուր ու մելամաղձիկ: Վահան Տերյանն այս առիթով ավելի խիստ ու պատկերավոր է արտահայտվել. «Լաց է այնտեղ ամեն երգ և ողբ՝ ամեն գիրք»: Հայկական գեղանկարչությունը, սակայն, առավելապես երևան է հանում մեր ժողովրդի հոգու անչափ ու անափ կենսասիրությունը և լավատեսական ոգին, նրա աներեր հավատը ապագայի հանդեպ: Դրա լավագույն վկայություններից մեկն է Ալեքսանդր Գրիգորյանի շռայլ վրձնաշխարհը:


Վերջինիս կենտրոնում ինքը՝ բանաստեղծ-նկարիչն է: Նրա արտիստիկ հայացքը (շատ դեպքերում՝ նաև կերպարը) առկա է թե՛ բնանկարներում («Վաղ գարուն. Գառնի», «Աղբյուրի մոտ», «Աշտարակի հին կամուրջը») ու պատմական թեմաներով կտավներում («Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Արտավազդ II, Անտոնիոս և Կլեոպատրա», «Արշակ II-ը որսի ժամանակ», «Աշոտ Երկաթի ձակատամարտը», «Սայաթ-Նովան պալատում» և այլն), թե՛ նատյուրմորտներում և թե՛ գրքային նկարազարդումների մեջ: Էլ չենք խոսում նկարչի նախասիրած ժանրի՝ դիմանկարի մասին:



Հարյուրավոր մարդկանց է նա նկարել՝ միմյանցից տարբեր ու բազմազան: Բայց նրանցից յուրաքանչյուրի մեջ և յուրաքանչյուրի միջոցով նա նաև իրեն է նկարել, ու դրանցից յուրաքանչյուրը, ի վերջո, Ալեքսանդր Գրիգորյանի ինքնադիմանկարն է: Ամեն մեկում կա նկարչի շունչն ու յուրահատուկ հայտանիշը՝ նշածն խոշոր աչքերը: Այդ դիմանկարները դիտողին «ճանաչողության հաճույք» պատճառելուց զատ նաև հնչում են որպես կյանքի և մարդկային

գեղեցկության ծոներգեր: Դրանք հաստատումն են նկարչի այն կենսասիրի խոսփայության, թե մարդկային կյանքը մեզ ի վերուստ տրված պարզ և;

Գույների իսկական տոն են նաև նկարչի բնանկարները: Ասել, թե դրանց վրա առկա են Մարտիրոս Սարյանի ստեղծագործական հանճարի շունչն ու կնիքը, նշանակում է առանձնապես շատ բան չասել: Ինքը՝ նկարիչը, դա մեծ պատիվ է համարում, բայց և շատ լավ գիտի իր արվեստի ինքնատիպությունը: Վերջին հաշվով, անցած դարակեսին ձևավորված



ո՞ր մի հայ նկարիչն է խույս տվել հայ գեղանկարչության նահապետի ազդեցությունից: Ալեքսանդր Գրիգորյանը շատ հուշեր ունի Մարտիրոս Սարյանի մասին, գրեթե միշտ սիրում է մեջբերումներ անել նրա հետ ունեցած իր զրույցներից. չէ՞ որ շուրջ 25 տարի այցելել է նրան ու կյանքի դասեր առել:

Հայ ազգային գունամտածողությամբ հագեցած կտավների հեղինակն ուրույն պատկերացում ունի ազգային ու համամարդկային հարաբերակցության և փոխառնչությունների մասին: Ալեքսանդր Գրիգորյանը տարիներ առաջ տեղի ունեցած մեր մի զրույցում հետևյալ բանաձևը տվեց. «Հայաստանը շատ սիրելով հանդերձ, աշխարհն է իմ հայրենիքը»: Այո՛, իրեն տիեզերքի մի մասնիկը համարելով հանդերձ՝ միաժամանակ գրում էր.

Ես մեծ Դանթեին կարդում եմ սիրով,
Բայց Նարեկով է հոգին իմ կնքված:

Հեքիաթային գունեղ ոճ ունեցող նկարիչը չէր կարող իր երկարատև ստեղծագործական ճանապարհի մի հանգրվանի չանդրադառնալ հայ ժողովրդական հեքիաթների ձևավորմանը: Չէ՞ որ դրանք ցուցնում են ոչ միայն մեր ժողովրդի հավաքական իմաստությունն ու կենսափիլիսոփայությունը, այլև դարավոր ճաշակը:

Ալեքսանդր Գրիգորյանի գրքային նկարազարդումները խորն են ու իմաստալից: Առանձնացնենք հատկապես նրա շեքսպիրապատումը՝ արված սև տուշով («Համլետ», 1964, «Մակբեթ», 1965, «Լիր արքա», 1966, «Օթելլո», 1966, «Ռոմեո և Ջուլիետ», 1970): Զարմանալ կարելի է, որ ի հակառակ հայ շեքսպիրագիտության նվաճումների, հայ շեքսպիրականը գունագծային առումով իրենից անմշակ դաշտ էր ներկայացնում: Ուստի բարեբախտություն էր Ալեքսանդր Գրիգորյանի անդրադարձը անգլիացի մեծ թատերագրի գրական աշխարհին:



Երկրորդ զարմանքն էլ թերևս այն է, որ նա մի կողմ դրեց արևելաբույր կուլուրիտով թաթախուն իր վրձինը՝ գրաֆիկայի ժլատ միջոցներով տալով Արևմուտքի թերևս ամենանշանավոր դրամատուրգի ստեղծագործությունների թեմատիկ պատկերումները: Ճիշտ է, թեև կան այս շարքի անտիպ ևս երկու նկարազարդումներ, դրանք մեծն Շեքսպիրի ստեղծագործությունների նկարազարդման առումով մեզանում տակավին չգերազանցված են մնում իրենց ամբողջականությամբ ու համընդգրկունությամբ:

Ծերունագարդ վարպետը մինչև իր երկրային կյանքի վերջին ակնթարթը ստեղծագործում էր պատանեկան ավյունով: Եթե տանն էր, ուրեմն նստած էր նկարակալի առջև: Նկարելը նրան բավականություն էր պատճառում: Նույն բավականությունն է զգում նաև արվեստասերը՝ այսօր ու վաղն էլ դիտելով այս մռայլ կյանքը հեքիաթի վերածած նկարչի հյութեղ կտավները: